ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման

վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (*Պ-859-01.10.2015-ՊԻ-010/0* և *Պ-859$^{1-8}$-01.10.2015-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

Ներկայացված օրենքների նախագծերի համաձայն՝ առաջարկվում է փոփոխություն և լրացում կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 82-րդ և 88-րդ հոդվածներում՝ սահմանելով, որ տուգանքը կարող է նշանակվել միայն դատարանի վճռով՝ վարչական մարմնի պահանջի հիման վրա, ինչպես նաև դրամական պահանջները ենթակա են կատարման՝ դատական ակտերի հիման վրա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ վերացնելով 88-րդ հոդվածով նախատեսված տուգանքի դիմաց գույքի վրա արգելանք դնելու և դրամական պահանջները հարկադիր կատարման ներկայացնելու վարչական մարմնի իրավունքները:

Օրենքների նախագծերին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործող կարգավորմամբ խախտվում է քաղաքացիների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ վարչական իրավախախտում կատարած անձը, մասամբ կամ ամբողջությամբ համաձայն չլինելով տուգանքի հետ, սակայն իրավական տեսանկյունից չունենալով բավարար գիտելիքներ հիմնավորելու իր դիրքորոշումը, բողոքարկելու այդ ակտը և չունենալով փաստաբան վարձելու ֆինանսական միջոցներ, ստիպված է վճարել տուգանքը, իսկ սահմանված ժամկետները լրանալուն պես վարչական ակտը դառնում է անբողոքարկելի: Գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ նշվում է, որ թեև անձը ձևականորեն պահպանում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, սակայն փաստացի զրկված է դրա բովան-

դակությունը կազմող իրավազորությունների իրացման հնարավորությունից, մինչդեռ նման սահմանափակում պետք է իրականացվի բացառապես դատարանի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմամբ:

Անդրադառնալով օրենքների նախագծերով առաջարկվող փոփոխությանը՝ հարկ ենք համարում նշել, որ **օրենքով նախատեսված իրավաչափ պարտավորությունների կատարման համար վարչական միջոցների համաչափ գործադրումը չի կարող դիտվել որպես սեփականության իրավունքի ոտնահարում կամ սեփականությունից զրկում, էականը՝ վարչական միջամտության դեմ դատական բողոք բերելու արդյունավետ միջոցի երաշխավորումն է:**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, 2015 թվականի մայիսի 26-ի ՍԴՈ-1210 որոշմամբ անդրադառնալով անձի գույքի վրա արգելանք դնելու ինստիտուտի վերաբերյալ հիմնախնդրին, գտել է, որ «ՍԴՈ-1073 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներն ամբողջությամբ կիրառելի են նաև սույն գործի նկատմամբ»:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, ՍԴՈ-1073 որոշմամբ քննության առնելով նույն հիմնահարցը, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.2-րդ հոդվածի շրջանակներում **արգելանքն արտադատական կարգով իրականացնելու վերաբերյալ դրույթը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող** և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համադրության արդյունքում գտել է՝ «**Տուգանքի նշանակումը, ինքնին, որպես պատասխանատվության միջոց, հանդես չի գալիս որպես սեփականազրկում:** Տուգանքի նշանակումից հետո անձն օրենքով սահմանված ժամկետում հնարավորություն ունի կամովին վճարելու տուգանքը՝ **որպես օրենքով նախատեսված պարտականության կատարում,** կամ բողոքարկել վարչական մարմնի որոշումը: Տուգանքի վերաբերյալ վարչական ակտի բողոքարկման դեպքում վարչական ակտի կատարումը

կասեցվում է, այսինքն՝ տուգանքի բռնագանձումն անվիճելի կարգով անձի կամքին հակառակ չի կատարվում: Ինչ վերաբերում է տուգանքի արտադատական կարգով բռնագանձմանը, ապա այն, նպատակ ունենալով ապահովելու տուգանքի վճարումը, **հանդիսանում է վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ**:

Այսինքն՝ իրավունքն ու պարտականությունը հանդես են գալիս ոչ միայն որպես անձի սուբյեկտիվ կարգավիճակը բնորոշող կամ հասարակական հարաբերություններում սուբյեկտիվ օրինաչափ հնարավորությունների ու ցանկությունների իրականացմանը կոչված և իրենց երկմիասնությամբ պայմանավորված իրավաբանորեն թույլատրելի միջոցներ, այլև իրավակարգավորման կարևոր բաղադրիչներ են, տվյալ դեպքում՝ անձի պարտավորության կատարումն ապահովելու միջոցով՝ պետական ու հասարակական կարիքների բավարարմանն ուղղված խնդիրներ լուծելու նպատակով: Այս առումով, **կարգավորման որոշակիորեն արտահայտված իրավական կոնկրետ նպատակը պետական լիազոր մարմնի կողմից վերահսկվող անձի կողմից իր սուբյեկտիվ պարտականության կատարումն ապահովելն է**, որն ունի սահմանադրորեն կանխորոշված հանրային-իրավական նշանակություն, քանի որ կոչված է երաշխավորելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջների կատարումը: Այդ նպատակի իրականացման՝ օրենքով թույլատրելի միջոցն անձի գույքային իրավունքների սահմանափակումն է, որը կարող է դրսևորվել անձի պարտավորությունների կատարմանը համարժեք գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու արգելքի ժամանակավոր կիրառմամբ: Այսինքն՝ **իրավակարգավորման գլխավոր միջոցն իր պարտավորություններին համարժեք անձի սահմանադրական իրավունքի ժամանակավոր սահմանափակմամբ նրա սահմանադրական պարտականության կատարումն ապահովելն է**: Գույքի արգելադրումն իր իրավակարգավորիչ բովանդակությամբ ու նշանակությամբ երաշխավորում է նաև

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների՝ օրենքով սահմանված կարգով իրացումը, ինչը հետապնդում է սահմանադրորեն արդարացի, հետևաբար՝ նաև իրավաչափ նպատակ, որի կիրառմանն ուղղված միջոցների և հետապնդվող նպատակի միջև օրենսդիրը պահպանել է ողջամիտ համաչափություն»:

Հարկ է նաև նշել, որ օրենքի 88-րդ հոդվածը փոփոխության է ենթարկվել նաև 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-249-Ն օրենքով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ որոշակի դեպքերում նպատակահարմարություն է առաջացել հանրային իրավական դրամական պահանջների կատարման համար դատական ընթացակարգի նախատեսումը, երբ, օրինակ, հանրային իրավական դրամական պահանջի կատարման արդյունքում անձը կարող էր զրկվել միակ բնակության վայրից և նշված դեպքում հանրային իրավական դրամական պահանջների կատարումը կարող էր հանգեցնել անձի համար ծանր հետևանքների, ուստի, այդ դեպքում անհրաժեշտություն է առաջացել ապահովելու անձի իրավունքների պաշտպանության առավելագույն երաշխիքներ, իսկ այդպիսիք կարող էին ապահովվել հատկապես դատական կարգով իրականացվող ընթացակարգում: Դատական կարգով կատարման ենթակա վարչական տուգանքի նվազագույն շեմը որոշվել է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակչության նվազագույն կենսամակարդակը, հետևաբար՝ նվազագույն աշխատավարձի քառապատիկն էականորեն ազդում է անձի ֆինանսական դրության վրա, և տուգանքի նման չափ նախատեսող ակտերը ենթակա են կատարման դատական կարգով:

Հարկ է նաև նշել, որ 2013 թվականի դեկտեմբերի 3-ին օրենքում կատարված փոփոխությունը միտված է եղել նաև թեթևացնելու կամ բեռնաթափելու վարչական դատարաններում առկա ծանրաբեռնվածությունը, որը նույնպես կարևոր է և կարող է ազդել նաև

այն մյուս գործերի ավելի հանգամանալից քննարկման կամ եզրահանգման վրա, որոնք վերաբերում են ավելի մեծ չափերի տուգանքներին:

Շարադրվածի հիման վրա գտնում ենք, որ օրենքների նախագծերով առաջարկվող փոփոխությունները հիմնավորված չեն, գործող իրավակարգավորումն իրավաչափ է, առկա է օրենքի կիրառման գործող պրակտիկա, որով լիարժեք ապահովվում են քաղաքացիների իրավունքները, քանի որ անձից պահանջվում է կատարել այն, ինչն արդեն իսկ պարտավոր էր կատարել օրենքի ուժով, հետևաբար, այս դեպքում հանրային իրավական դրամական պահանջների արտադատական կարգով կատարումը լիովին բավարար է, քանի որ նույնիսկ այս դեպքում պահպանվում է անձի իրավունքը ցանկության դեպքում վիճարկելու դրամական պահանջի հիմքում դրված վարչական ակտը:

Եվնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական տուրքի մասի» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական տուրքի մասի» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չի առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին առնչվում են, սակայն ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մի շարք ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ կարգավորվում են վարչական ակտի հարկադիր կատարման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև Նախագծերով վերանում են տուգանքի դիմաց գույքի բռնագրավում և/կամ արգելադրում իրականացնելու վարչական մարմինների իրավունքները:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է վերացնել անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հանրային իրավական դրամական պահանջներով գումարի բռնագանձման վերաբերյալ գործերի վարույթը, ըստ այդմ նաև՝ տուգանքի դիմաց գույքի բռնագրավում և/կամ արգելադրում իրականացնելու վարչական մարմինների լիազորությունները և* Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **դրական ազդեցություն:**

««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» փոփոխություն և լրացում կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում» փոփոխություն և լրացում կատարելու մասին, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին և «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերի փաթեթով առաջարկվում է վարչական տուգանքի նշանակումը, ինչպես նաև վարչական տուգանքի դիմաց գույքի բռնագրավումը և (կամ) արգելադրումն իրականացնել միայն դատարանի վճռի հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում հարկային մարմնի՝ հարկային պարտավորությունների կատարումն ապահովող գործիքների արդյունավետությունը կընկնի, հետևաբար՝ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կլինի բացասական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին», ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում» փոփոխություն և լրացում կատարելու մասին», ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», ««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նշված օրենքների նախագծերի փաթեթի ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական և համայնքների բյուջեների ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859-01.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀայաստանիՀանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի թիվ ՀՕ-41 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 82-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մասով.
«3.1. Տուգանքը կարող է նշանակվել միայն դատարանի վճռով՝ վարչական մարմնի պահանջի հիման վրա:»:
Հոդված 2. Օրենքի 88-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«Դրամական պահանջները ենթակա են կատարման դատական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:
Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենքի գործող խմբագրությամբ 88-րդ հոդվածի հիման հարուցված վարչական վարույթները ենթակա են կարճման: Վարչական մարմինները համապատասխան հայցադիմումներով կարող են դիմել դատարան:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859[1]-30.09.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 05-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 2. Օրենսգրքի 199-րդ հոդվածի 8-րդ մասից հանել «անբողոքարկելի դարձած» բառերը:
Նույն հոդվածի 10-րդ մասից հանել «անբողոքարկելի չդարձած» բառերը:
Հոդված 3. Օրենսգրքի 29.1-ին գլուխն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենսգրքի գործող խմբագրությամբ 29.1-ին գլխով սահմանված ընթացակարգով հարուցված վարույթները քննվում եւ ավարտվում են այդ վարույթների հարուցման պահին գործող ընթացակարգով:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859[2]-01.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 05-ի թիվ ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում՝
- Վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«Հարկադիր կատարման ենթակա դատական ակտերը»
- 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածից հանել «, ինչպես նաեւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը» բառերը:
Հոդված 4. Օրենքի 31.1-ին հոդվածն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 5. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 6. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-ին եւ 5.2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 7. Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11-15-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 8. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 8. Օրենքի 67-րդ հոդվածի 6.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 9. Օրենքի 72.1-ին հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով.
«1.1. Հարկադիր կատարողի նշանակած տուգանքները բռնագանձվում են դատարանի վճռով:
Դատարանը տուգանքները բռնագանձելու վերաբերյալ հարկադիր կատարողի դիմումը քննում է դիմումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում: Հարկադիր կատարողը եւ տուգանքի ենթարկված անձը պատշաճ ձեւով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի եւ վայրի մասին:
Հարկադիր կատարողի նշանակած տուգանքները բռնագանձելու մասին դատարանի վճիռը կարող է բողոքարկվել:»:
Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարչական ակտերի հարկադիր կատարման վարույթները ենթակա են կարճման: Վարչական մարմինները համապատասխան հայցադիմումներով կարող են դիմել դատարան:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859[3]-01.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 06-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 305-րդ հոդվածի 4-րդ

պարբերությունում «որը ենթակա է հարկադիր կատարման կարգով բռնագանձման» բառերը փոխարինել «որը ենթակա է բռնագանձման դատական կարգով» բառերով:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 306.1-ին հոդվածով.

«Հոդված 306.1. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը

Տուգանքը սույն օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված ժամկետում խախտողի կողմից չվճարվելու դեպքում տուգանք նշանակելու մասին որոշումն ուղարկվում է տուգանքի գումարը Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններին համապատասխան նրա աշխատավարձից կամ այլ վաստակից, կենսաթոշակից կամ կրթաթոշակից հարկադիր կարգով պահելու համար:

Եթե տուգանքի ենթարկված անձը չի աշխատում կամ տուգանքի գանձումը խախտողի աշխատավարձից կամ այլ վաստակից, կենսաթոշակից կամ կրթաթոշակից հնարավոր չէ այլ պատճառներով, տուգանքի գանձումը տուգանք նշանակելու մասին մարմնի (պաշտոնատար անձի) որոշման հիման վրա կատարում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը՝ գանձումը խախտողի անձնական գույքի, ինչպես նաեւ ընդհանուր սեփականության մեջ նրա բաժնի վրա տարածելու ճանապարհով:

Տուգանքի գանձումը չի կարող տարածվել այն գույքի վրա, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գանձում չի կարող տարածվել կատարողական փաստաթղթերով:

Արգելվում է պաշտոնատար անձանց նկատմամբ նշանակված տուգանքները գանձել ձեռնարկությունների, հիմնարկների կամ կազմակերպությունների հաշվին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859[4]-01.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 06-ի մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 225-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«2. Կամավոր չվճարելու դեպքում տուգանքի գումարը բռնագանձվում է դատական կարգով:»:
Նույն հոդվածը լրացնել հետյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով.
«4. Վարչական տուգանք նշանակելու մասին որոշումը կատարման ենթակա չէ, եթե տուգանքը բռնագանձելու մասին հայց չի ներկայացվել որոշումը կայացվելուց հետո եռամսյա ժամկետում:»:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենսգրքի գործող խմբագրությամբ 225-րդ հոդվածի հիման հարուցված վարչական վարույթները ենթակա են կարճման: Մաքսային մարմինները համապատասխան հայցադիմումներով կարող են դիմել դատարան:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859[5]-01.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի թիվ ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածում՝
5-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«Սույն հոդվածով նախատեսված խախտումներ հայտնաբերելու դեպքում վերադաս հարկային մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորած պաշտոնատար անձի միջնորդությամբ մինչեւ տուգանքի գումարի վճարումն անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների վրա դատարանի որոշմամբ որպես հայցի ապահովման միջոց կարող է դրվել արգելանք, բացառությամբ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հարկային մարմին ներկայացված հայտարարագրում ներառված կամ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգ մուտքագրված տվյալների հիման վրա օպերատիվ-հետախուզական միջոցառման դեպքերի: Սույն պարբերությամբ նշված դեպքերում օպերատիվ հետախուզական միջոցառման արդյունքում կազմված արձանագրությունը հիմք է հանդիսանում խախտման հայտնաբերման պահին անփաստաթուղթ ապրանքների կամ չգրանցված ուղեկցող փաստաթղթով ապրանքների նկատմամբ արգելանք կիրառելու միջնորդությամբ դատարան դիմելու համար: Հարկ վճարողը զգուշացվում է արգելադրված ապրանքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:»:
7-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«Արգելանքի տակ դրված ապրանքն ի պահ է հանձնվում հարկ վճարողին՝ ստացականով, իսկ եթե հարկ վճարողը փորձում է արգելադրված գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնել, թաքցնել, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնել, փչացնել կամ ոչնչացնել, ապա ապրանքի պահատվությունը հանձնվում է նման գործունեություն իրականացնող մասնագիտացված կազմակերպությանը՝ պահատվության պայմանագրի հիման վրա: Պահատվության հետ կապված ծախսերը կատարում է հարկ վճարողը:»:
8-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 2. Օրենքի 29.1-ին հոդվածն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 3. Օրենքի 29.2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.
«Հարկային պարտավորությունների գծով գումարների մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ հարկ վճարողի գույքի բռնագանձման համար:»:
Հոդված 5. Օրենքի 30.2-րդ հոդվածում՝
1-ին պարբերության 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«Գույքի արգելանքը հարկային մարմնի հիմնավորված միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ իրականացվող հայցի ապահովման միջոց է, որի կատարումն ապահովում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն գլխում շարադրված առանձնահատկությունները:»:
2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«Սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված միջնորդությամբ հարկային մարմինը կարող է դիմել դատարան չկատարված հարկային պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում, եթե հարկային մարմնի կողմից ձեռք բերված տվյալները

բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել հարկային պարտավորության կատարման համար անհրաժեշտ գույքը:»:
3-րդ պարբերության 1-ին նախադասությունն ուժը կորցրած ճանաչել:
Նույն պարբերության 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետյալ բովանդակությամբ.
«Արգելադրման ենթակա է միայն այն գույքը, որն անհրաժեշտ է չկատարված հարկային պարտավորության կատարումն ապահովելու համար՝ այդ պարտավորության չափով:»:
Նույն պարբերության 3-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.
«Արգելանքը դրվում է հարկ վճարողի գույքի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում:»:
4-րդ եւ 5-րդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:
17-րդ պարբերության 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.
«Գույքի բացակայության, անբավարարության կամ հարկ վճարողի գտնվելու վայրն անհայտ լինելու դեպքում արգելանքն իրականացնող հարկադիր կատարողը կազմում է համապատասխան արձանագրություն:»:
18-րդ պարբերության «պաշտոնատար անձը» բառերը փոխարինել «հարկադիր կատարողը» բառերով:
21-րդ պարբերության «հարկային մարմնին» բառերը փոխարինել «արգելադրումն իրականացնող հարկադիր կատարողին» բառերով:
22-րդ պարբերության 1-ին նախադասության «պաշտոնատար անձը» բառերը փոխարինել «հարկադիր կատարողը» բառերով:
24-րդ պարբերության 1-ին նախադասության «առկա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով» բառերը փոխարինել «չմարած հարկային պարտավորությունների գծով այդ» բառերով:
25-րդ պարբերության 1-ին եւ 2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:
Նույն պարբերության 3-րդ կետը «դեպքում» բառից հետո լրացնել «՝ հարկային մարմնի միջնորդությամբ դատարանի կայացրած որոշման հիման վրա» բառերով:
Նույն պարբերության 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեյալ բովանդակությամբ.
«4) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածում սահմանված հիմքերով եւ կարգով:»:
26-րդ պարբերության 1-ին նախադասության «կարգադրություն ուղարկել համապատասխան անձանց եւ մարմիններին արգելանքը վերացնելու մասին» բառերը փոխարինել «արգելանքը վերացնելու միջնորդությամբ դիմել դատարան» բառերով:
Նույն պարբերությունից հանել 2-4-րդ նախադասությունները:
27-րդ եւ 28-րդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:
30-րդ պարբերության «պաշտոնատար անձն» բառերը փոխարինել «հարկադիր կատարողն» բառերով:
31-34-րդ պարբերություներնն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենքի գործող խմբագրությամբ 28-րդ, 29.1-ին, 29.2-րդ եւ 30-րդ հոդվածների հիման հարուցված վարչական վարույթները ենթակա են կարճման: Հարկային մարմինը համապատասխան հայցադիմումներով կարող է դիմել դատարան:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859[6]-01.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-270 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.
«8. Վճարման պարտավորությունների գծով գումարի մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դիմել դատարան՝ վճարի բռնագանձման կամ գույքի վրա արգելանք դնելու պահանջով:»:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենքի գործող խմբագրությամբ 18-րդ հոդվածի 8-րդ մասի հիման հարուցված վարչական վարույթները ենթակա են կարճման: Հարկային մարմինը համապատասխան հայցադիմումներով կարող է դիմել դատարան:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859[7]-01.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում ««Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված» բառերը փոխարինել «դատական» բառով:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենքի գործող խմբագրությամբ 35-րդ հոդվածի 4-րդ պարբերության հիման հարուցված վարչական վարույթները ենթակա են կարճման: Հարկային մարմինը համապատասխան հայցադիմումներով կարող է դիմել դատարան:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-859[8]-01.10.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ-51 օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին, «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին եւ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածը արմատական փոփոխությունների է ենթարկվել 2013թ. դեկտեմբերի 05-ին ընդունված ««Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-141 օրենքով: Նշված փոփոխությունների հետեւանքով հոդվածը ներկա խմբագրությամբ կիրառման արդյունքում ստեղծվել է իրավիճակ, որտեղ անձը, կատարելով ենթադրյալ վարչական իրավախախտում, վարչական մարմնի կողմից ծանուցվում է, որ պարտավոր է վճարել տուգանք, ինչի հետ նա մասամբ կամ ամբողջությամբ հնարավոր է, որ համաձայն չէ, սակայն չունի բավարար գիտելիքներ իրավական տեսանկյունից հիմնավորելու իր դիրքորոշումն ու բողոքարկելու այդ ակտը, ոչ էլ փաստաբան վարձելու կամ իրավախորհրդատվություն ստանալու հնարավորություն (ընդ որում, այդ գործերով նման ծառայությունների գումարը հիմնականում բազմապատիկ անգամ ավելին է, քան տուգանքի գումարը), ավելի մեծ ծախսերից խուսափելու համար ստիպված է վճարել վարչական տուգանքը: Այսպիսով, խախտված է քաղաքացիների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը («Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդված), քանի որ նրանք փաստացի զրկված են լսված լինելու իրավունքից ու հնարավորությունից: Ասվածը հիմնավորելու համար բավական է մեջբերել թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 որոշման հետեւյալ հատվածը. «Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի եւ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական եւ թե՛ իրավական առումներով, մասնավորապես այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ (տե՛ս, Իվանովն եւ այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.2006 թվականի վճիռը, պարբ. 70): Հետեւաբար, վարչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի իրականացման մասին ծանուցումը վարույթին մասնակից անձին պետք է

տրամադրվի այնպես, որ ողջամտորեն ապահովվի վերջինիս մասնակցությունը վարչական վարույթին (տե՛ս, ըստ հայցի ՀՀ աշխատանքի պետական տեսչության ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն Վալերի Օվսյաննիկովի թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2008 թվականի որոշումը)»:
Այսպիսով՝ քաղաքացու լսված լինելու իրավունքն ամրագրված է թե՛ Սահմանադրության, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի եւ թե՛ նախադեպային (ինչպես ներպետական, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի) մակարդակով:
Մինչդեռ, Օրենքի ներկա խմբագրության պայմաններում ոչ թե վարչական մարմինն է տուգանքի բռնագանձման պահանջով դիմում դատարան, այլ անհամաձայնության դեպքում քաղաքացին է դիմում դատարան ու ներկայացնում հայցադիմում՝ բողոքարկելով վարչական ակտը: Գործնականում դա ո՛չ տրամաբանական է, ո՛չ արդարացի, ո՛չ էլ ապահովում է քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, քանի որ ցանկացած պրակտիկ իրավաբանի հայտնի է, որ շատ ավելի հեշտ է ներկայանալ դատարան եւ հայտնել առարկություններ հայցապահանջի հետ համաձայն չլինելու դեպքում (ընդ որում դրա համար չեն պահանջվի խորը իրավաբանական գիտելիքներ, այլ բավական է ներկայացնել փաստական հանգամանքները), քան վարչական գործով հիմնավոր հայցադիմում կազմել ու բողոքարկել վարչական մարմնի կազմած ակտը: Ընդ որում, վարչական դատավարությունում գործում է դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու լիազորությունը (վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդված), ինչն իր հերթին զգալի հավասարակշռություն է մտցնում իրավական գիտելիքներ չունեցող քաղաքացու եւ ինստիտուցիոնալ անձ հանդիսացող եւ իրավաբանական վարչություններով զինված վարչական մարմինների միջեւ: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հայցադիմումի կազմման այնպիսի պայմաններ է առաջադրել, որ իրավաբանական կրթություն չունեցող միջին վիճակագրական քաղաքացու կողմից այն կազմվելու դեպքում հնարավոր է, որ անգամ վարույթ ընդունվելու փուլը չհաղթահարի:
Գործող կարգավորմամբ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով՝ սահմանված ժամկետները լրանալուն պես վարչական ակտը դառնում է անբողոքարկելի եւ նույն օրենքի 88-րդ հոդվածի ուժով ենթակա է կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով: Փաստորեն վարչական մարմնի բեռը դրվում է քաղաքացու վրա, այնինչ քաղաքացին վճարում է հարկ, որպեսզի վարչական մարմիններն իրեն համապատասխան ծառայություններ մատուցեն:
Ինչ վերաբերվում է վարչական մարմնի կողմից գույքի վրա արգելանք դնելուն, ապա տվյալ դեպքում թեեւ անձը ձեւականորեն պահապանում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, սակայն փաստացի զրկված է դրա բովանդակությունը կազմող իրավազորությունների իրացման հնարավորությունից: Սա նաեւ ֆինանսական եւ հոգեբանական ճնշման եւս մեկ մեխանիզմ է, որպեսզի քաղաքացին հնարավորինս արագ փորձի վճարել խնդրո առարկա տուգանքը՝ իր գույքն (այդ թվում նաեւ դրամն) արգելանքից հանելու համար: Մինչդեռ, նման սահմանափակում պետք է իրականացվի բացառապես դատարանի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմամբ:
Արդեն մի քանի տարի է, ինչ արդարադատության նախարարությունն իր առջեւ գերխնդիր է դրել բեռնաթափելու դատարանները, սակայն կիրառված մեթոդը բոլորովին չի արդարացվում այդ նպատակով, քանի որ դատարանների բեռնաթափման հաշվին զանգվածային ոտնահարման են ենթարկվում հատկապես իրավագիտակցության ցածր մակարդակ ունեցող քաղաքացիների իրավունքները, եւ նրանց հաշվին լցվում է պետական բյուջեն, հարկադիր ծառայության արտաբյուջետային հաշիվը, ինչպես նաեւ սնվում են ճանապարհային երթեւեկության որոշ

կանոնների խախտման համար գանձվող տուգանքներից բաժին ստացող մասնավոր եւ այլ կառույցներ:

««Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2014թ. դեկտեմբերի 17-ին ընդունված ՀՕ-249-Ն օրենքով հոդվածում որոշակի լրացումներ կատարվեցին հոդվածում: Ուշագրավ է հատկապես այն, որ այդ փոփոխությունների ուժով անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա գանձման ենթակա դրամական պահանջը 200.000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում (նշենք, որ այդ ակտերի ճնշող մեծամասնությունը՝ 95%-ից ավելին չի գերազանցում նշված շեմը) գործում է ոչ թե նշված վարչաիրավական ընթացակարգը, այլ նման գանձումները ենթակա են կատարման դատարանի կողմից տրված կատարողական թերթի հիման վրա: Այսինքն, այդ քայլով ստեղծվել է առանց օբյեկտիվ հիմքի եւ իրավաչափ նպատակի դիսկրիմինացիայի հիմք՝ դեմ գնալով նաեւ Կոնվենցիայի 14-րդ հոդվածին, որով արգելվում է խտրական մոտեցումը: Մասնավորապես, ինչպե՞ս կարելի է հիմնավորել այն հանգամանքը, որ քաղաքացին, ում նկատմամբ նշանակված է ենթադրենք 80.000 ՀՀ դրամի սանկցիա, փաստացի չի օգտվում դատական պաշտպանության իրավունքից, իսկ 200.000 ՀՀ դրամից ավելի տուգանվողը չի կարող միանգամից տուգանվել վարչական մարմնի որոշմամբ, նրա դեմ պետք է վարչական հայց հարուցվի: Ընդ որում, առավել հավանական է, որ 200.000-ից ավել չափով տուգանվողը կդիմի փաստաբանի՝ իրավական աջակցություն ստանալու համար:

Ներկայացված նախագծերի փաթեթով վարչական օրենսդրությունը վերադարձվում է նախկին՝ իրավաչափ խմբագրությանը, որով մասնավորապես տուգանքի դիմաց գույքի բռնագրավում եւ/կամ արգելադրում իրականացնելու վարչական մարմինների իրավունքները վերացվում են: